

# Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 17

45 Դեկտ. 1894

## Ա Ս Տ Ե Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Դ Ի Տ Ա Ն Ո Յ

Վ Ա Տ Ե Կ Ա Ն Ե

LA SPECOLA VATICANA



Վատիկանի աստեղագիտական դիտանոցն ինչպէս որ կը կարծուի նոր հաստատութիւն մը չէ եւ ոչ ալ առաջին անգամ որ Գիտութիւնն աստիճանականութիւն կը գտնէ Քահանայապետական պալատին մէջ: Այսպիսի թիւր ենթադրութեան գէմ պատմութիւնը բողոք կը բառնայ, եւ դիտանոցիս վարչութեան կողմանէ հրատարակեալ հանդէսք (Publicazioni della specola Vaticana) նորանոր ցուցումներ կը մատակարարեն ի հաստատութիւն արդէն այս մեզ ծանօթ ճշմարտութեան: Վատիկանի պալատին մէկ կողմը վայր մի կայ հանդերձ աշտարակով, որ ծովու երեսէն 70 մէտր բարձր է: Այս տեղւոյս իտալէրէն Specola անունը տուած են: Իբր քսան տարիէ ի վեր այս վայրս կը բնակին քահանայապետական արքունեաց պատկանող Աստիճանաւորք ոմանք, որոնք ստոյգ է թէ սքանչելի եւ ակնահաճոյ տեսարան մի ունին առաջի աչաց, բայց թանգ դնած են այսպիսի տեսարան մը, մանաւանդ յամառան, վասն զի հանապազօր ըստիպեալ են իրենց բնակարաններն երթալու համար բաղմաթիւ:

սանդուխներ ելեւէջ ընել: Տումարի սրբազրութեան ժամանակ Գրիգոր ԺԳ. քահանայապետը շինել տուած է այս զիտանոցս եւ յամի 1703, Կղեմէս ԺԱ. այս զիտանոցիս յիշատակութիւնը կ'ընէ իւր կոնդակաց միոյն մէջ, որով կը ծանուցանէր զիտանոցի Եւրոպայի թէ իւր Նախորդն այս զիտանոցս ճոխացուցած է գործիքներով, որ հարկաւոր են զարեգակն զննելու եւ ուսումնասիրելու համար: Այս գործիք հաստատեցին սրբազրեալ տումարին ճիշդ ըլլալն, երբ որ նորանոր փաստիւք ցուցին որ զիշերահաւատարբ, ըստ Գրիգորեան սրբազրութեան, ճշգիւ իրենց որոշ ժամանակամիջոցին տեղի կ'ունենան:

Դիտանոցիս զիտանոց զարդն էր այն միջօրէական զիծն, որ զրուած է նոր տումարիս գործածութեան համար եւ որ ցայսօր ամբողջ կը կենայ: Երբեմն այս օրինակ աշխատութեան մեծ կարեւորութիւն կ'ընծայուէր. իսկ այսօր համարեա թէ ընաւ յարզ չունի: Թէպէտեւ մեր հարց աշխատութեան այս հետքերը կը պահպանուին, բայց ա' միջօրէականներ չեն շինուիր: Միջին միջօրէականը կը գործածուի տեղական միջօրէականաց տեղ: (1) Դիտանոցիս սրահին առատազէն գէտ ի տանիք զրուած էր երկաթեայ ձող մ'որուն ծայրը կար գրօշազարդ վիշապ մի: Ասի սկզբնատառով հողմացոյց մըն էր եւ ձողոյ մը շտորնիւ, որ հողմացուցին թուալմանը հետեւելով առատազին վրայ նկարեալ հողմավարդին (rose de vents) զանազան նշանները մատնանիչ կ'ընէր, կարելի էր առանց սրահը թողլու հովին ինչ ուղղութիւն ունենալը իմանալ:

Բայց լաւագոյն իրերն ալ իրենց նորութիւնը կը կորսնցնեն եւ կամ բարձի թողի կ'ըլլան: Այս վիճակիս վիճակակից եղաւ մասամբ մեր զիտանոցն ալ: Դիտանոցիս կառուցանել տրւողք հոտած էին իրենց նպատակին. վասն զի երբ որ Եւրոպական քաղաք, ի բաց ասեալ Ռուսք, ընդունեցին տումարին նոր սրբազրութիւնն, այլ եւս անօգուտ էին աստղաբաշխական գործիք: Կղեմէս ԺԱ. քահանայապետութեան ժամանակ զիտանոցս առժամանակեայ կեանք ունեցաւ: Յամի 1703 Փետրուարի 2ին, ի Հոռոմ մեծ ուեր գործեց երկրաչարժ մը. Հոռոմայ բնակիչք ա՛ն ու գողի մէջ էին որ երկրաչարժը նորէն պիտի

---

(1) Եւրոպոյ միջին միջօրէականն է Կրիստի Դիտանոցի միջօրէականը Մանսֆելտն:

կրկնուի, վասն զի Քաճանայապետի կողմանէ ի ժողով դու-  
մարեալ գիտնականք հաստատական պատասխանն էին սուած:  
Այս գիտնականներէն մին, Blanchieri, աւելի եւս յառաջ եր-  
թալով զանազան զննութեանց վրայ հիմնեալ կը սնուէր թէ կա-  
րելի է քառորդ ժամ յառաջ կանխաւ ծանուցանել երկրաչարժ  
տեղի ունենալիքը: Ասի սկիզբն եղաւ մանրադիտական (micro-  
scopique) զննութեանց, եւ կըսեն թէ այս գիտնականն իւր զը-  
րութիւնն կը հաստատէր մոլորականին (bain de mercure)  
մանրադիտական շարժմանց վրայ: Այնպէս հաւատ կ'ընծայուէր  
այս զրութեան յաջողութեան վրայ, որ երկրաչարժի ժամանակ  
գողութիւն ալ կատարել մտածեցին: Օրին մէկն անծա-  
նօթ անձինք, սրունք Քաճանայապետական վարաւանդատա-  
սից (սէյյիս) զգեստներ զգեցած էին, կէս օրին Հստայ արու-  
արձանները զրուեցան, եւ յանուն Քաճանայապետին ժողովըր-  
դեան ծանուցին մեծ երկրաչարժ մը, եւ թէ իւրաքանչիւր ոք  
պարտաւոր էր իւր անձն տպանովել: Տակաւին վաս էր ամէնուն  
մտաց մէջ վերջին արկածին յիշատակն, ուստի եւ իւրաքանչիւր  
ոք փութաց ի փախուստ, չքանելով զամենայն ինչ ի ձեռս գողոց:  
Գողք յօգուտ գործածեցին այս ընդհանուր աճն ու սարսափը:  
մտան իշխանաց եւ կարախալաց պալատներն, եւ կողպակելով  
առին տարին արծաթեղէններն ու այն թանկագին իրերն ու  
առարկաներն, որ ընդ ձեռամբ էին:

Անցեալ զարու վերջերն, յամի 1780, Zelada կարախալն  
զրապետ անուանուեցաւ: Իւր ընտկարանն, որ այժմու Եաբու-  
րական թանգարանն է, գիտութեանց ճշմարիտ կաճատ մըն էր:  
Այս կարախալն աւելին ընել ուղեղով կը բաղձար Վատիկան-  
եան գիտամտոցին նախկին զիբքն ու կարեւորութիւնը տալ: Ո-  
մանք մտաղիւր ընել սուին զինքն որ այս հաստատութիւնս, եւ  
բխտասարդութեան կրթութեան յատկացեալ բլլալով, քաղքին  
կեդրոնէն շատ հեռի կը գտնուէր. ըստ հետեւորդի այս հեռա-  
ւորութիւնը պատճառ պիտի բլլար որ երիտասարդք այսպիսի  
հեռաւոր վայր մի չյաճախեն: Բաց սաստի գիտամտոց կարի մօտ  
բլլալուն Ա. Պետրոս Եկեղեցւոյ գմբէթին, որ երկնից մի մե-  
ծադոյն մասը եւ նորա օգերեւութաբանական տեսիլները կը ծած-  
կէր, որով առանց արգելից կարելի չէր նաւոր զննութեանց ըզ-  
բաղիլ: Այս գիտողութեան վրայ գիտամտոց մը շինուեցաւ Հոս-  
մէական վարժարանի մէջ ընդ հսկողութեամբ Boscovich Հօր:

Բայց յամի 1789 վատիկանեան գիտամտոցը (Specola Va-

ticana) նորէն յարութիւն առաւ Պիոս Զ. Սրբազան Քահանայապետը հրամայեց որ վատիկանեան գիտանոցը Mons. Gili անուն գիտնականին տրամադրութեան ներքեւ գրուի, ուր պիտի կատարէր զննութիւններ Հռոմայ կլիմային վրայ եւ գրադէր՝ աստղաբաշխական աշխատութեանց. նաեւ այս աշխատութեանց համար տուն իրին հարկաւոր գործիներ: Օղերեւութարանական զննութիւնք տեւեցին յամէ 1800 յ1821: Յարգ. Lais Քահանան, որ Լեոնեան նոր գիտանոցին պաշտօնեաներէն մին է, մօտերս հրատարակեց այս օղերեւութարանական զննութեանց արդիւնքը:

Ճշմարիտ է սակայն որ գիտանոցք եւս իրենց համբաւն եւ պայծառութիւնն կը ստանան աստեղագէտներէն: Mons. Gili գիտնականի մահուընէ վերջ, վատիկանեան գիտանոցը մոռցուեցաւ իւր խուզարկութեանց հաւաքածոյն յրուեցան եւ գիտանոցիս դահլիճք ամայացան: Բայ աստի Հռովմէական վարժարանին աստղաբաշխական գիտանոցն ալ, առաւել յարմարութիւն ունէր աստղաբաշխական զննութեանց: Նա Պիոս Թ. իսկ աւելորդ համարեցաւ Հռոմայ մէջ երկու աստղաբաշխական գիտարանք, որոնք միեւնոյն կառավարութեան կը պատկանէին: Երբ որ այս Քահանայապետս ստիպուեցաւ Կոնիքինպի պալատը թողուլ եւ ելլալ, վատիկանեան գիտարանն (Specola Vaticana) տեղի բնակութեան եղաւ պալատական Սատիճանաւորաց, որոնք ընդհանրապէս երբէք սիրով չին վայելած այն հաճոյքն, զոր կը մատակարարէ իրենց այսպիսի բարձր եւ միանգամայն գիտական վայր մի: Իտալացիք, Secchi Յիսուսեան Հօր մահուընէն վերջ, Հռովմէական վարժարանին գիտանոցը զրաւեցին: Դիտանոցս զրաւեալ չէր ցորչափ կ'ապրէր այս գիտնական Յիսուսեանն, որ այնպիսի պատուով փառաւորեց իտալական գիտութիւնն եւ որուն գիտական տեսութիւններն այնպէս ճիշդ եւ ստոյգ էին, որ կարծես թէ կանխաւ ծանուցած եւ մարգարէացած էր ինչ որ կը տեսնանք ներկայիս մէջ Ferraris Հայրն, որ Secchi յաջորդն էր, նոյն դպրոցի աշակերտած էր: Ferraris ին կը պակսէր չլացուցիչ անուն մը. նա Secchi ի անունն անգամ չկրցաւ յարգել տալ հաստատութեան մը, զոր այնպիսի բարձրութեան հասուցած էր: Յիսուսեանք չքանեցան: Janicula ի դարաւանդից վրայ, իրենց յատուկ կալուածի մը մէջ, մինչեւ ուր բնականապէս չէր կրնար իտալական ուսնձղութիւնն համիլ, ի հիմանց կառուցին նոր աստղաբաշխական գիտանոց մ'որ այսօր զարմանաց առարկայ եւ նիւթ է գիտնականաց, եւ ստուգիւ այս գիտարանս այն թան-

կազմին առսուելութիւնն եւս ունի, որ նոր կառուցուած ըլլալուն, նոր ալ գործիներ եւ մեթոտներ ի կիրառութեան են: Վատիկանեան դիտանոցին հաւասարելու համար կը կարօտի անուան եւ հոչակի որ այնպէս դիւրութեամբ կը շոյալուի բաղմաթիւ արժանի չեղող հաստատութեանց: Լեւոն Ժ.Պ. Արքայան Քահանայապետին քահանայութեան յորելինն առթիւ գէպք մը տեղի ունեցաւ որ պատիւ է իտալական կղերին: Քահանայապետին իբրեւ ընծայ չ'ուղարկուեցան միայն արծաթեղէնք, շուրջառք, սկիւնք եւ ճաճանչք, այլ նաեւ աստղաբաշխական գործիք: Սոյն պարպեւք կը յայտնէին կարեւորութիւնն զոր կ'ընծայէր իտալական կղերն այսպիսի դիտութեանց, որ կարծես իրեն համար յատուկ չէին, եւ միանգամայն կը ծանուցանէին որ հաւատքն ու գիտութիւն քորք են: Այս աստղաբաշխական գործեաց հաւաքածոյն բաւական ստուարութիւ եւ շատ իսկ էր դիտանոցի մը զանազան պիտոյն կազմելու համար. բնական էր որ ամէնուն միտքն դար վերտալին վատիկանեան դիտարանն հաստատուած տեմնել Լեւոն Ժ.Պ., որ այն աստիճան օժանդակ եղած էր սրբազան գիտութեանց, կարելի չէր որ անտարբեր կենար կղերին աստղաբաշխական գիտութեանց նկատմամբ տածած բաղձանաց: Իսկոյն իւր բարձր մտքն տեսաւ որ ինչէր կրնար շահել նպատամատոյց ձեռն կարկառելով այս շարժման, եւ ինչպէս ուրիշ ամէն խրնդրոց մէջ, յայտ եւս կամեցաւ որ Եկեղեցին զառաջինն հարթէ ճանապարհ: Վատիկանեան դիտարանը դեռ իր տեղն էր, ուրեմն այդ վայրը նախկին գրեց վերածել պէտք էր եւ սկսիլ տալ՝ զննութիւնները:

Բայց ներկայ քաղաքակիրթ դարուս գիտանոցը կարելի չէր որ երկու նախընթաց դարուց գիտանոցին նմանէր: Ի ներկայիս գիտանոց մը յինքեան ամբողջութիւն մի է, որուն զանազան մասունքն իրարու հակառակ պահանջումներ ունին: Նախնական ծրագրի մը համաձայն, կը բաղձացուէր այս գիտանոցս օգերեւութարանական գիտանոցի վերածել: Ի Հոռոմ արդէն կային երեք աստղաբաշխական գիտանոցներ, չորրորդ մըն ալ աւելորդ կը համարուէր: Նաեւ այս գիտանոցիս այնպիսի գումարներ հարկաւոր էր յատկացնել, միւս գիտանոցաց հետ մրցելու համար որ Առաքելական Փահլին ելեւմտական կարողութենէն վեր էր: Ուրեմն աւելի համեստօրէն ուղեցին գործի ձեռնարկել: Բայց շուտով առաջին խորհուրդը բարձի թողի եղաւ, ինչպէս որ յաճախ կը պատահի երբոր գործի մը սկսինքս: Նորոգութիւն մը պատճառ

կըլլար երկրորդին, երկրորդն երրորդին, և ոչ չատ ժամանակի մէջ զխոսանոցս ունէր ամեն հարկաւորները՝ մըցելու համար մինչև անգամ Իտալիոյ և Եւրոպայի յար և նման հաստատութեանց հետ:

Այն ատեն էր որ Արբազան Քահանայապետն կամեցաւ աշխատակից ըլլալ երկնից քարտէսն յորինող մասնաժողովոյն. նուրս այս առաջարկութիւնն ընդունելի եղաւ թէ՛ մասնաժողովոյս կողմանէ երախտագլխութեամբ, թէ՛ ամբողջ ուղղափառներէն մեծաւ եռանդեամբ, որոնք երջանիկ և հպարտ էին Նորին Սրբութեան այս իմաստուն նախաձեռնարկութեանը նկատմամբ. պէտք էր ուրեմն առ այս հարկաւոր տեղին պատրաստել: Այս վայրս կարելի չէր վատիկանեան զխոսանոցն ըլլալ. խիստ մօտ էր Ս. Պետրոսի գմբէթին և տանց, և այս մերձաւորութիւնս մեծ արդեւ պիտի ըլլար զննութեանց, ուրեմն այլուր պէտք էր զիմել՝

Վատիկանի պարտէզներուն մէջ կայ մեծ աշտարակ մի (tour), որ իննեցորդ դարու կիսուն Լեւոն Գ. Արբազան Քահանայապետը կառոյց Հռոմայ պաշտպանութեանը համար: Այս աշտարակս 17 մէտր ներքին տրամագիծ ունի, 4,50 հաստատութիւն որմնց և ծովուն երեսէն 100 մէտր բարձր էր: Երեսը զըտակոններու բաժնուած էր, ամէնքն ալ կամարաձեւ յորինակ. արդ այս աշտարակիս գագաթն է որ շինեցին գմբէթն մեծ հասարակածին, որ պիտի ծառայէ երկնից լուսանկար քարտէսին: Դիւրին է ի միտ ամնուէն որ այս աշտարակս թէ՛ իւր հսկայագործ շինութեամբը, թէ՛ հեռի դմուելովը տուներէն, և թէ՛ վերջապէս իւր բարձրութեամբն (80 մէտր բարձր է Հռոմայ Տիբեր գետին երեսէն), ունի յարմարութիւններն այսպիսի պատուական գործի համար:

Այն անձանց կարողութիւնը, զորս Լեւոն ԺԳ այս հաստատութեանս զբախ կարգած է՝ առհաւատչեաց գրաւական է մեզ, հաստատութեանս սպազայ բարգաւաճման: Լեւոն ԺԳ, ցուցնելու համար այս գործոյս տուած կարեւորութիւնն՝ ուղեց մշտնջենաւոր յիշատակով յաւերժայնիկ այս հաստատութիւնս: Թափել տուաւ Ս. Պետրոսի յուշարար միտալներն, որոնք նախընթաց տարւոյն կարեւորագոյն գործերը կը յիշեցնեն: Այս տարուան միտալը նուիրուած են վատիկանի զխոսանոցին, որ Քահանայապետութեան մեծամեծ գործերէն մին է և. այն հաստատութեանց թիւէն՝ որ կը մնան իրենց հիմնադրաց մահուքնէ վերջն ալ, և որ սքանչելապէս կը մեկնեն սաղմոսանուագ մարգարէին

այս խօսքը. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս նորա պատմէ հաստատութիւնս: Դաւիթ. Սաղմ. ԺԸ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Յ. ԱԼԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Զ

ՆԼԵԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍՈՅ ԱՆՐԱԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Այն օրէն 'ի վերոր *Havre*ի երկու փարոսներն մշուշի ասան երեկարական լուսով լուսաւորուիլ սկսան, կարծես թէ նոր յայտնութիւն մըն ալ եղաւ: Այս քաղաքին փարոսներէն մին տակաւին երեկարական լուսով լուսաւորուած չէ: Նաւաստիք և 'ի մասնաւորի *Havre* քաղաքին նաւաւղիք բաւական ժամանակէ 'ի վեր տեսան որ երեկարական փարոսն իւր բոլոր յաւկաթիւնները կը կորսնցնէ մարախըպաւ օրեր, և տակաւ հազիւ թէ իւր լոյսը տեսանելի կ'ըլլայ, և երբեմն բոլորովին իսկ աներեւոյթ կ'ըլլայ, մինչդեռ հասարակ իւզով լուսաւորուած փարոսը շատ քիչ անգամ իւր լոյսը կը կորսնցունէ: Այսու հանդերձ երեկարական լոյսը այսօր ընդհանուր եղած է, իւր գործածութիւնը տակաւ կը զարդանայ նոյն իսկ երկրորդական և երրորդական փարոսներու մէջ: Բայց ահաւաստիկ Անդղլիացի նաւապետաց ընկերութիւնն, բոլորեց այս օրերս *Trinity—House* անուն նաւային ընկերութիւնն՝ թէ երեկարական լոյսն անբաւական է և զանազան անյարմարութիւններ ունի նաւապետացութեան համար:

Այս նաւաստիք կը հաստատեն որ շատ անգամ Թէյմզ գետին բերանը գտնուող և երեկարական լուսով լուսաւորեալ

փարոսայ լոյսն անբաւական եւ անյարմար իսկ է, մանաւանդ միջնորդութի ինչ ինչ փիճակայ մէջ անտեսանելի եւս են, մինչդեռ նաւերու հասարակ լոյսերն եւ քաղքին կազերն կատարելապէս տեսանելի են:

Եթէ ի նկատի եւս չառնունք այս կէտս, սակայն եւ այնպէս երեկտրականութեան չափազանց զօրաւոր լոյսն, ինչպէս որ է South-Foreland փարոսինը, անյարմարութիւններ եւս ունի մերձակայ նաւերու համար ալ: Այսպիսի խիստ զօրաւոր լոյս մի բնական է որ կը շլայնէ ճանապարհորդներուն աչքերը որ իրենց շուրջ գտնուած աւարկաները չեն տեսներ եւ զանազաներ նաեւ լուսոյ ճառագայթից սաստիկութիւնն ալ հեռուն կը պատկերացնէ նաւերուն ու կայմերուն պատկերներն, եւ այսու այնպիսի խաբէական պատկերներ կը յօրինէ, որ յոյժ կը դժուարացնէ մութ գիշերներու մէջ տեսնել աւարկաներն եւ կամ կացութիւնն զնահատել:

\*  
\* \*

### GOBIUS MINUTUS ԱՆՈՒՆ ՁԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Frédéric Guitel, որ Roscoffի Ձկնարանին մէջ յոյժ շահեկան քննութիւններ կատարած է այս ձկանս վրայ, մեզ կը հաղորդէ հետեւեալ տեղեկութիւնները: Արուն խեցիէն բոյն մը կը շինէ իրեն համար, որուն մէջ մտնելով դուրս կը հանէ աւազըն ու կայծքարերը: Խեցին բոլորովին ծածկելու եւ անտես ընելու համար այս ճարտար ձուկն ուղղազիծ աւազին վրայ կը յառաջանայ եւ արագաբար իւր լանջաթեւերն ու սրչն ալ կերերցնէ, այնպէս որ իւր ետեւն աւազակոյտ մը կը շինէ: Խորունկ ակօս մը կը ցուցնէ իւր ընթացած ճամբան:

Այսպէս ակօսմը եւ աւազն փորելէն վերջ, պահ մը վերստին կը մտնէ իւր բնակարանն, դուրս կը նետէ աւազն եւ ուրիշ ուղղութեամբ երկրորդ ակօս մըն ալ բանալու համար վերստին դուրս կ'ելլէ:

Այս գործողութիւնս այս եղանակաւ ութն ինն տնգամ կրկնուելով, խեցին բոլորովին կը թաղուի աւազէ բլրակի մը ներքեւ: Այս կատարելապէս ապահովեալ կըլոր եւ փոքր քարանձաւիս մէջ էզն ալ մտնելով հաւկիթ կ'ածէ, որմէ անմիջապէս

վերջ կը լքանէ իւր ձագերն մինչդեռ արուն կը մնայ խեցիին մէջ եւ կը հսկէ հաւկիթներուն վրայ մինչեւ որ ձագերն հաւկիթէն դուրս ելլեն: Խեցապատեան անամնիկը այս հաւկիթներով է որ կը մնանին:—Երբոր արուն արտաքսենք իւր ընտրած ըտնէն, նորէն կրկին անգամ իւր տեղը կը վերադառնայ. նաեւ եթէ զինքն խաբելու համար իւր խեցիին քով ուրիշ խեցիներ ալ դնենք, դարձեալ գիտէ իւր խեցին գտնալու կերպն: Իսկ եթէ իւր էզին ձուարկութեան վրայ հսկող արուն որ եւ է եզանաւաւ մ'արտաքսենք իւր խեցիէն եւ կամ նոր խեցի մը դնենք հին խեցիին տեղ, դարձեալ առանց վարանելու կուգայ կը մտնէ այն խեցիին մէջ որ իւր հին խեցիին տեղը զրուած է. բայց շուտով կը նշմարէ որ այդ ձուարկութիւն իւր էզինն չէ, որով կը լքանէ այդ խեցին ալ եւ կը ջանայ գտնել զիւրն: Նոյն իսկ կատաղութեամբ կը կռուի այն արուին հետն ալ, որ մեր փորձին ժամանակ, իւր էզին ձուարկութիւնը բովանդակող խեցին գրաւած է:



Ը Ն Տ Ի Ր Ա Ս Ա Ց ՈՒ Ա Ծ Ք

Կրօնքն՝ է այն շղթայն, որ կը զօգէ երկինքն երկրի հետ:  
Հովնբաւ

Սոսոյ ծեղ մի՛ յայտնի ապացոյց մի է գոյութեանն Աս-  
տուծոյ:

Փ. Փ. Ռուսօ

Համբերութիւնը դառն է, այլ իւր պատուը քաղցր:

Նոյն

Մօր մի սիրտը՝ բնութեան պուխ գործոյն է:

Կրէյքի

Համբերութիւնն՝ է քաջութիւն առաքինութեան:

Պեռ. ար Ս. բիւր

Անգործութիւնն՝ հոգւոյն ժանպն է:

Լէզիս

Բազում մարդիկ՝ իւրեանց կենաց լաւագոյն մասը՝ զայլս  
թշուառացնելու կը գործածեն:

Լա Պրիւշէր

Չանձրոյթն՝ հիւանդութիւն մի է, ոյր զեղն է աշխատու-  
թիւնն:

Լէզիս

Թշուառութիւնը՝ մեծ մարդոց փառաց վրայ նոր փայլ մի  
կը յաւելու:

Ֆենկոն

Յերկուանք՝ սկիզբն են իմաստութեան:

Արիստոտէլ

Մուլութիւնը՝ գունն է բոլոր մոլութեանց:

Մալպրանշ

Արդարն՝ Աստուծոյ պատկերն է յերկրի:

Պօնաբարր

Մարդս է անչափաւոր յամենայնի:

Մօնրայն

Մարդոյս համար ամենակարեւոր գիտութիւնը՝ զիւր անձնը  
ճանաչելն է:

Պօսիւէ

Չանձրոյթը՝ ծուլութեան ձեռք մտաւ յաշխարհ:

Լա Պրիւշէր

Ջանադէք հաճոյանալ, այլ յիշեցէ՛ք միանդամայն թէ շո-  
ղորթութիւնը պատրել է:

Ս. Լանդէր

Ամենէն առաքինի մարդն այն է, որ կը ջանայ հանապա-  
գօր առաքինի լինել:

Լա Ռօշճուգօ

Ամէն բանի տեղ մի, եւ ամէն բան իւր տեղը:

ԲԷՆԵԷ

Աշխատութեան պտուղը՝ հաճոյից քաղցրագոյնն է:

Վօլմարկ

Յիմարութիւնը՝ բազում անդամ սաստիկ անձնասիրութիւն  
մի է:

Տր Սդալ

Կոնջ համար օգտակարագոյն եւ պատուաւոր զիտութիւնն  
առտնին յանձանձանաց զիտութիւնն է:

Մօնրայն

Համբաւը՝ ծուխ մի է:

Վոլդէո

Ճշմարիտ քաջութիւնը՝ ձախողութեան դէմ ապաւէն կը  
գանէ միշտ:

ՔԵՆԵԿՐՈՆ

Արդարոյն մահը՝ մեծ եւ մխիթարիչ գաս մի է:

Պուճելք

Պատուաւոր անձանց ի մէջ՝ խօսքը դաշինք մի է:

Լաո,ո2

Մարդասիրութիւնն՝ առաքինութեանց զլիաւորն է:

Վօլմարկ

Ճշմարտութիւնը՝ գտկարս եւ զանմիտս եւեթ կը վիրա-  
ւորէ:

Դշխոյն Քրիստիկոս

Մարդ չկրնար տեսնել գառաքինութիւն՝ առանց զայն սի-  
րելու, եւ չկրնար զայն սիրել՝ առանց երջանիկ լինելու:

ՖԵՆԵԿՐՈՆ

Ժամանակը զրամոյ կը նմանի, մի՛ կորսնցունեք զայն, եւ  
բաւական կ'ունենաս:

Լէվիս

Ինչպէս մարմինը՝ նոյնպէս եւ միտքը կ'ուզէ մնանիլ. կըր-  
թութիւնն իւր սնունդն է:

Հիւպլե

Առաքինութիւնն՝ հոգւոյն առողջութիւնն է:

Ժուպէր

Եթէ աւելորդ բաներ գնես, ընդ հուպ կը վաճառես եւ  
զկարեւորն:

Ֆրանգլին

Տղիտութիւնը՝ մարդկային ազգին ծանրագոյն հիւանդու-  
թիւնն է:

Վոլդէո.

Մնափառ մարդը՝ կոյր մի է, որ չճանաչեր զիւր անձնն:

Եունկ

Շողոմքն է անարգանք ինչ քաղաքավարական:

Լամբնէ:

Անհամբերութիւնը՝ կը վնասէ ամեն բանի:

Էնուրրր

Ո՛րքան առաւել առաքինի լինի ոք՝ սննդանս եւս կը հեռա-  
նայ ընդ այն մնասպարծելէ, եւ առաւել կը համողութի իւր  
պարտքը միայն կը կատարէ. առաքինութիւնն՝ երբէք չհարս-  
տացուներ զմարդ:

Տիւզո

Մեր հոգիք միայն զիտեն՝ թէ քանի երջանիկ է մարդ երբ  
բարի լինի:

Սոփոկղէս

Բարի համբաւն է ամենէն չքեզ գերեզմանը, զոր մարդ  
կրնայ ունենայ:

Փ. Փ. Ռուսո

Անպաղտնասպահ մարդն՝ անփակ նամակ մի է, զոր ամե-  
նայն ոք կրնայ ընթեռնուի:

Շանճօր

Քաջութիւնը՝ ճախողութեան լոյսն է:

Վօզմարկ

Իմաստունը՝ կենաց կորստեամբ կը շահի զկեանս:

Եպիկտետոս

Նախանձն առաւել անհաշտ է, քան ատելութիւնն:

Լա Ռօշճուգօ

Անցեալ ազիտից յիշատակն՝ հաճոյական է միշտ:

Կիկերոն

Իւր պատենէն ստէպ մերկացեալ սուրը՝ փութով կը մաչի:  
Պիւրագորաս

Դիւրին է դանել ոսկի եւ ադամանդ, այլ զիտուն չլթունք  
անգին արժէք ունին:

Սողմոնն

Մարդ՝ է մահկանացու իւր երկիւղներովն, անմահ՝ իւր  
տենչերովն:

Պիւրագոր

Կիրք՝ ծայրայեղութեան յանգած թերութիւններ են կամ  
առաքինութիւններ:

Կէրէ:

Կը կարծէի թէ մարդ կրնար առաքինի լինել առանց կրօ-  
նի. փորձառութիւնը փարատեց պատրանքս:

Ժ. Ժ. Ռուսո

Չարարեղու կարողութիւնն՝ անկատարութիւն մի է:

Տ'Ակէսո

Մահն՝ հզօր միջնորդ մի է:

Շիլլեր

Ազնուագոյն եղիք, երջանկագոյն պիտի լինիք:

Լէվիս

Ժամանակին յարզը չճանաչող մարդը՝ փառաց համար չէ  
ծնած:

Վօլնարկ

Հանճարեղ մարդն՝ հասարակաց գործոց երբեք իսառնուելու  
չէ:

Եպիկուրոս

Կեղծաւորութիւնը՝ մեծարանք մի է, զոր մուլութիւնն՝ ա-  
ռաքինութեան կը մատուցանէ:

Լա Ռօշֆուզօ

Անճնասիրութիւնը՝ մարդելուզաց մեծագոյնն է:

Նոյն

Փոխառուն՝ փոխատուին դերին է:

Բենեէ:

Պէտք է արժանի լինել գովեստից եւ անոնցմէ փախչել:

Ֆենելոն

Փորձառութիւնը՝ կը պճնէ զապագայն հազար տեսակ զե-  
ղեցկութեամբք:

Կոլզմիք

Աղօթքն՝ հայելի մի է՝ յորում հոգին կը տեսնէ իւր բոլոր  
բիծերն:

Ս.-Վիսաան տր Բօլ

Ժուժկալ լինելը՝ մեծ առաքինութիւն մի չէ. սակայն ժուժ-  
կալ չլինելը մեծ թերութիւն մի է:

Դշխոյն Քրիստիւնիա

Ոչ ոք կրնայ զիպուածով իմն առաքինի լինել:

Սենեկա

Մարդոց ամենէն հարուստը՝ խնայողն, եւ ամենէն աղքա-  
տըն՝ աղանն է:

Շանճօր

Ազգաց ճշմարիտ իմաստութիւնը՝ փորձաստութիւնն է:

Պոնաբարք

Երկու հաւասարազօր մարդոց՝ իրաւունք ունեցողն հօրա-  
զոյն է:

Պիւքագորսա

Հասակաց, Կոմիտաս Ա. Ոսկեան

---

# ՍՈՒՐԲ ՍԵՂԲԵՍՏՐՈՍ

ՍԵԾ ԼԱՅՐԱՊԵՏՆ ԼՈՌՎՍԱՅ

Ողջոյն Հայ Ազգին սիրելի եւ մեծապէս յարգելի եղած է եւ պիտի ըլլայ միշտ այս Սուրբ Հայրապետիս անուան, վասն զի իւր լուսաւորութեան Հօր անուան հետ մերսիւ եւ անքակտելի եղանակաւ կապեալ է: Հանրածանօթ է այն աւանդութիւնն թէ, մեր Սուրբ Հայոն Գրիգոր Լուսաւորիչ գնացած է յայց եւ ի տես Մեծ եւ Սուրբ Հայրապետին Հռովմայ: Ազգային նուիրակն աւանդութիւն մի է թէ, այս մեծ Հայրապետն եղած էյ որ Հայոց Եկեղեցին Կաթողիկոսական բարձր աստիճանաւ ճուսացուցած, եւ նոյնը Կեսարիոյ Արքեպիսկոպոսին իշխանութենէ՝ անկախ եւ ազատ կացուցած է: Թո՛ղ քննադատք մերժեն Ազաթանեղոսի պատմութիւնը, բայց չեն կարող ջրել նաև աւանդութիւնը, որում ժամանակաւ կարի մերձաւոր, ուսեալ եւ անուանի վկայք կը գտնուին: Ի մէջ այրոց, Եղիշէի պատմութեան մէջ, ի թղթին, զոր Յովսէփ Կաթողիկոս եւ այլ Եպիսկոպոսունք եւ Աւագանին Հայոց Թէոդոս փոքր կայսեր զրած են, այսպէս կը կարդամք: «Սոյնպէս եւ զհաւատն որ ի Քրիստոս ընկալեալ ի Սուրբ Եպիսկոպոսապետէն Հռովմայ, որ լուսաւորեաց զխաւարային կողմանս Հիւսիոց, զոր եւ այժմ կամին ի մէջ կորզել հանել խաւարատէր որդիքն արեւելից:» (1). Տարակոյս չկայ թէ՛ Ազգային Պատմագրին յիշատակած վերոյիշեալ նամակին խօսքերն Սրբոյն Սեղբեստրոսի կ'արկնարկեն. ուստի յայտնի կ'երևի, յիշեալ ազգային ժողովական նամակին մէջ, թէ համօրէն Ազգն կ'ընպունի եւ կը խոստովանի թէ, Սրբոյն Սեղբեստրոսի Հռովմայ Հայրապետին պարտական է իւր լուսաւորութիւնը, այս է Քրիստոնէական հաւատքը, զի նա «լուսաւորեաց զխաւարային կողմանըս Հիւսիոց» — Ըստ այսմ աւանդութեան մեր Եկեղեցին մեծ պատուով կը յարգէ եւ կը մեծարէ Սուրբ Հայրապետիս յիշատակը՝ իբրև մեծի բարերարի եւ բարեկամի Եկեղեց-

(1) Երեւէ. էջ 123



## ԱՆՀԵՏԱՆԱԼ ՏԵՍԱԿԱՑ

ՅԻ ԲԱՐԵՇՐՋՈՒՄՆ (ÉVOLUTION)

Եթէ տեսակաց ինչպէս ծնանիլը չեմք գիտեր, գէթ նոցա ինչպէս անհետանալը գիտեմք ի քանի ինչ զիպուածս: Ամերիկացի բնապատում մը՝ Ղուկաս անուն, այսպիսի ժամանակակից անհետացմանց վրայ ուշադրաւ յօդուած մը հրատարակած է գիտական հանդիսից մէջ: Կարճաթեւ ծովասագն (Pingouin brachyptère), ներկայացուցիչն մաշկոտանց ի հիւսիսային ծովս, կայր տակաւին ի Կրոէնյանս եւ յիսլանս գարուս սկիզբը Յիսուն տարի կայ որ մարդն անհետացոյց այս տեսակը իւր վերջին սպաստանարանին մէջ, ի Կղզւոջն Ֆունգ: Այդ իրողութիւնն ինչ ինչ կարեւորութիւններ ունի ըստ տեսակէտի փոխակերպականաց վարդապետութեան, եւ քանի մը զիտողութիւններ ընկու աւիթ կ'ընծայէ մեզ:

Ֆունգ կղզւոյն ծովասագն՝ բնական ընտրութեան (Sélection) ազդեցութեանը ամենայարմար հանգամանաց մէջ կը գտնուէր անշուշտ Կղզին 30 հարիւրակալ մակերեւոյթ մը չունի եւ Պ. Ղուկաս միլիոններով կը հաշուէ ծովասագեր՝ որոնց մնացորդքն թանձրը խաւերով անդ զիղուած են շեղձաշեղջ: Սոքա ըստ կարեւորն կղզիացեալ էին ամբողջովին, վասն զի կարճաթեւ ծովասագն չկրնար թռչիլ. որով փորձեր ընելու սքանչելի ասպարէզ մը կար հոն Բայց, արի, անս թէ ինչ պատահեցաւ 1834 էն, թուական որում գտնուեցաւ Ֆունգ կղզին, մինչեւ 1850, ուրիշ տեսակ մը, մարդկային տեսակն, կարճաթեւ ծովասագուց բազմաթիւ ներկայացուցիչները վերածեց ի վիճակ երկրաբանական բեկորներու, ինչպէս նաեւ նոյն բանը պիտի վիճակի նաեւ մօտերս ամերիկեան եղած առիւծի, եւ այլոց բազմաց: Ուստի, Տարվինի տուած իմաստին համաձայն, կենաց պայքարը չէ որ մեր մաշկոտից տեսակը սպաննեց, այլ ընդհակառակն՝ աւելի զօրաւոր տեսակի հետ ունեցած պայքարն, (քանզի, ըստ զրութեան փոխակերպից, մարդն ոչ այլ ինչ կարէ վինել, գէթ ըստ մարմնոյ, եթէ ոչ կենդանային կենաց զարգացման վերջին սանդղամատը): Իսկ որովհետեւ, բարեշրջական եւ ոչ մի դպրոց՝ Պ. Քաթրլֆաթի եւ հակառակ վարդապետութեան կուսակցաց հետ կ'ուղէ ընդունել թէ «մարդս ընտրութենէ աւելի զօրաւոր ըլլայ» (եւ ասիկայ իւրեանց զրութեան ճիշդ հետեւանքն է), պէտք է ճանչնալ թէ

ծովատաղի մասին այժմ մեր տեսածը, և ամերիկեան եղածին համար վաղիւ մեր տեսնելիքը, բազմիցս տեսնուած է յանցելուան, մարդկային տեսակէն նուազ զօրաւոր տեսակաց և սեռից աղբիւցութեան ներքեւ, ժամանակը իրենց ձեռնառն օգնական ունենալով. պէտք է խոստովանիլ թէ, գէթ ի քանի ինչ դիպուածս, յառաջագոյն գտնուող տեսակներն անհետ եղած են, ոչ թէ փոխակերպութեամբ, այլ սպառմամբ յայլոց, կամ, աւելի հետեւակ և յայտնի լեզու մը գործածելու համար, ինչպէս որ ոտորէն կ'անհետանայ կերողին ստամոքսին մէջ: Ուրեմն ընարութեան սկզբունքն, որ ըստ Պ. Վառինեիի «սկզբունք մը չէ, այլ իրողութիւն մի է», ընդհանուր ըլլալէն շատ հետի կը գտնուի, վասն զի այնպիսի դիպուածներ մեզ ընդ առաջ կ'եննեն, յորս նոյն սկզբունք իրողութիւն անգամ չէ: Այս մեր խորհրդածութիւնք ստուգել կը հաստատեն Պ. Կոտրիի խօսքը թէ «բարեչրջման ըսկզբունքը այնչափ բարձր տեղ կը բնակի որ մեզ այժմ անհասարին է գայն բռնել»:

Բայց սակայն, մեզ պիտի ըսեն, թէ ընարութիւնն, եթէ ժամանակ ունեցած ըլլար, անշուշտ կատարած պիտի լինէր այն փոխակերպութիւնները՝ որոնց վրայ դուք կը կատկածիք. և գրեթէ գեռ տաք եզող այն բազմաթիւ բեկորներու մէջ անոնց հետքը գտնել կարելի է: Յնորք և բանդալուշանք է այս Պ. Ղուկաս դայն կը ցրէ դայս ձեւ օրինակիւ Այս միլիոնաւոր չորցած մնացորդներէն՝ ամբողջ տասն և երկու կմախներ յարդարել կարելի պիտի չըլլայ՝ նոյն իսկ սոյն կմախները այլ և այլ բեկորներէ ևս յարդարել ուզես: Աստի կը տեսնուի թէ այսպիսի յարդարմանց վրայ հիմնեալ չափերով և բազդատութիւններով ինչ արգիւնք կրնայ յառաջ գալ: Եթէ դարու մը և կէս դարու մը բեկորներու համար իրն այսպէս է, հապա ինչ խորհելու է այն պատճառաբանութեանց համար, որոնք հռչակաւոր հնէաբանական դիւաններէ քաղուած փաստերու, ենթադրական նախնեաց ամբողջ շարքերու վերակազմութեանցը, կղզիացեալ և անյայտ ոտկերաց բազդատական քննութենէն թելադրեալ գիւտերու վրայ հիմնուած են:

Սոյն օրինակ խօսքերէ յետոյ, այլ ևս չզարմացուիր Պ. Վառինեիի նման ջերմ փոխակերպականի մը սա յայտնութեանը վրայ թէ «Մեք փոխակերպութեանն ո՛չ իրողութիւններ ունիմք, և ո՛չ սոյն իրողութիւնքը ձեռք բերելու համար ճիշդ ոճեր. մեք կը հաւատամք փոխակերպութեանն, առանց սորա ապացոյցը

ունենալու», եւ մի ուրիշ բնապատումի մը, Քարլ Վոգտի, բեր-  
նէն լսելով սա խօսքերը թէ «երբեք մեք պիտի չկարենամք իրո-  
զութիւններով ապացուցանել, թէ ո՛ր եւ է տեսակ մը ուրիշ ժա-  
մանակի մէջ ապրած ուրիշ տեսակէ մը կ'իջնայ», վերջապէս  
Ջիթթէի նման հնէաբանի մը սա խոտտովանութեանը վրայ թէ  
«այս խնդրոյս նկատմամբ գիտութիւնը մունջ է գրեթէ ամեն  
դատուց համար»:

Ըստ գիտական տեսակէտի, բացառութիւնք երբեք չեն հաս-  
տատեր զկանոն, եւ չկրնար ուրացուիլ թէ ծովասազի անհետա-  
նալը կենաց պայքարի օրինաց գէթ բացառութիւն մը չըլլայ,  
եթէ նորա աղբեցութեան եւ ընտրութեան զօրութեան ըստ  
հաճոյս սահմաններ հաստատել, եւ զմարդ կենդանեաց շարքէն  
զուրս դնել չուզուի. եւ յայնժամ պիտի լսին Գլաքարեայի առ  
Վալլաս ըրած սա երկոյրարանութիւնը, զոր Պ. Քաթրըֆաթ  
այսպէս կը համառօտէ «եթէ մի տեսակի պատմութիւնն ո՛ր եւ է  
կենդանածնական մի տեսութեան հակառակ իրողութիւններ  
ներկայացունէ, կրնամք ստուգութեամբ անտի եզրակացունել  
թէ այն տեսութիւնն մոլոր է բովանդակ գործարանաւոր էակաց  
համար»:

Տեսակաց ծագման խնդրոյն նկատմամբ թերեւս երբէք դո-  
հացուցիչ լուծում մը պիտի չունենամք, տեսակին ինչ ըլլալն  
ալ թերեւս ստոյգ կերպով երբեք պիտի չզիտնամք: Ուստի գէշ  
չըլլար մերթ ընդ մերթ հաստատել թէ բնական իմաստասիրու-  
թիւնն զեռ ի տիտ մանկութեան է, եւ թէ իրողութիւններն՝  
խիտ վառվառն երեւակայութիւններու ըմբամանց, եւ հաւա-  
քաբանութեան խիտ անձուկ յառաջադրեալներու եզրակացու-  
թեանց յարմար գալէն շատ հեռի է:

ՅՈՎ. Վ. ԲՕԼԱԹԵԱՆ

Ա Յ Լ Ե Դ Ա Յ Լ Ը

Ծակումն երկրի (Sondage)

Այն տաժանելի աշխատութիւնք, որ երկար տարիներէ հետէ, սկսուած են ի Միացեալ Նահանգս (Wheeling) մեծաւ փութաջանութեամբ եւ կանոնաւորեալ եղանակաւ յառաջ կը տարուին:

Մինչեւ հիմա հանապազօր 3 մէտր զետինը կը ծակին:

Այս առերեւոյթ յաջողութիւնս, կարծես այժմէն իսկ յազութութիւն կը հռչակէ: Ձեռնարկութեան զլիսաւորք կը բաղձան միայն 32000 մէտր յառաջանալէն եւ փորելէն յետոյ՝ վերջ տալ աշխատութեանց: Մինչեւ ցայսօր զործաւորք չբախեցան ծանր դժուարութեանց, անշուշտ հեռի չէ օրն, յորում այդ հազարաւոր մէտր խորանկութեան չհասած, չհանդիպին ջրոյ կամ կաղի, որով բնականապէս ամենայն աշխատութիւնք յօդ պիտի ցնդին:

\*  
\*\*

MONT BLANC Լեռան վրայ աստղաբաշխական  
դիտարան հաստատելու ջանքեր:

M. Imfeld, Հելուետացի երկրաչափն, որ Mont Blanc ի վրայ աստղաբաշխական դիտարան մը հաստատելու հարաւորութեան համար, երկար ատեն աշխատած եւ թափառած է այդ լեռան վրայ, հեռուեալ անգեկութիւններս հաղորդած է հելուետական լրացրի մը, զոր համառօտ կը ծանօթացնենք մեր ընթերցողաց: M. Imfeld, ութ զործաւորք եւ երկու երկրաչափերով, բնակութիւն հաստատած էր M. Vallot ի դիտանոցըն, որ արդէն 4000 մէտր բարձրութեան վրայ հաստատուած է: Ասկից հանապազօր այդ մարդիկ լեռան զլուխը կ'ելլէին եւ հոն օրն ի բուն կ'աշխատէին քննելու համար ձեան թանձրութիւնը: Հռչակաւորն Eiffel արդէն ըսած էր որ եթէ լեռան գագաթնի ձիւներուն թանձրութիւնը 12 մէտրէ աւելի է, անկարելի է հոն դիտանոց մը կանգնելը:

Ի սկզբան անդ M. Imfeld զաղաթէն 18 կամ 20 մէտր վար բարձրութեան վրայ գտաւ ժայռ մը որուն վրայ 1 մէտր

Թանճրութեամբ ձիւն կար: Այս առաջին արդիւնքէս քաջալերեալ սկսան լեռան երեք զանազան կողմերէն, եւ ամենէն բարձրը տեղէն 12 մէտր վար, երեք ստորերկրեայ ճանրաներ շինել, տեանելու եւ գանելու համար այդ բարձրութեան վրայ ժայռ մի: Բնականապէս այս աշխատութիւնը շատ դանդաղ կը յառաջանային: Գործաւորաց մեծագոյն մասը այդպիսի բարձրութեան վրայ կը հիւանդանար, մինչեւ իսկ ձեռնարկու երկրաչափներէն մին մեռաւ, մինչդեռ այլք, ձորի մէջ իրենց ընկերներէն շատ աւելի կ'աշխատէին, լաւ ախորժակ ունէին եւ երկար ժամանակ ալ կը քնանային:

Թէպէտեւ գիտանոցին աշխատութեան սենեկին մէջ, երկու մեծապիւր գեանածուխի վառարաններ կը վառէին, ի վերայ այսր ամենայնի ջերմաչափն երբէք զերոյէն վեր չբարձրացաւ. թանաքը միշտ կը սառէր, 83 աստիճանի մէջ ջուրը կը սկսէր եռալ, այնպէս որ բնաւ չկրցան ըստ բաւականի կերակուրներն անպաժ եփել: Սաստիկ մրրիկներ քանի մ'օր արդիւնցին աշխատութիւնները եւ վերջապէս այն աստիճանի սաստկացան եւ այնպիսի դժուարութեանց բախեցան գործաւորք, որ M. Imfeld ստիպուեցաւ հրաժարիլ իւր զազախարաց գործապրումէն եւ լքանել իւր ձեռնարկութիւնը:

### Գետնածուխ՝ աղի խաւերու տակ

Cowpen ի ազահանքերու մէջ, նորագոյն ժամանակներու, Newcastle ի քիմիական բազալդրութեանց ընկերութիւնը պեղուումներ ընել կուտար, երբ որ երկրիս մակերեւոյթէն 591 մէտր վար գտնուեցաւ գեանածուխի խաւ մ'երկու ոտնաչափ խորուսկութեամբ: Տեղի ունեցած քննութիւնը հաստատեցին որ այս ածուին լաւ տեսակէն էր: հաւանական է որ այս առաջին խաւին ներքեւ գտնուի երկրորդ մըն ալ: Այս գիւտս այնու մանաւանդ թանկազին է որ կը հակառակի երկրախօսից ոմանց կարծեաց, որ չին ընդունիր ազիբու ներքեւ գիտնածուխ գտնուելու հնարաւորութիւնը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ. Յ. ՍԼԱՆ



# ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ

Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԱԼ՝  
ՅԲԱՆՍԵՐԷՆ ԲԱՌԻՑ ՎՐԱՅԷՆ



(Շարայարութիւն) (\*)

Եզրակացութիւն

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Հակագործութիւն

(REACTION)

Ոչ միայն սարքերութիւններն՝ այլ և բառերն իրարու վըրայ զանազան կերպով կը հակագործեն և նոյն ընտանիքէ բառեր իրարու կը յանձնուն իրենցմէ միոյն միայն յատուկ եղած իմաստները կամ գործածութիւններն: Այս ներգործութիւնը զանազան կերպով կը ներկայանայ, օրինակ perle orientale (արեւելեան մարգարիտ) նշանաւոր համարուած է իրեն զեղեցկութեամբ. ասկէ perle orientale կանուր perle brillante ի նշականութիւնը՝ oriental բառը brillant բառին՝ փայլուն նշանակութիւնը ստանալով փոխանցութեամբ (contrecoup) orient բառը նոյնօրինակ նշանակութիւն մը կստանայ, և կըսեն l'orient d'une perle՝ մարգարտի մը սրտզպաջը՝ փայլը նշանակելու համար:

(\*) Տե՛ս Պատկեր թիւ 16, էջ 383

Ամերիկային՝ Indes Occidentales անունը կուտան բուն իսկ Հնդկաստանէն տարբերելու համար, այս անունն անգամ մը ընդունուելէն վերջը հակադրութեամբ Հնդկաստան ալ ստացաւ Indes occidentales անունը:

Ombraze (ombre բառէն) ծառի մը տերեւոց չուքին ամբողջութիւնը կը ցուցնէ: Շուքէն վախցող ձիուն cheval ombrazeux բացատրութենէն՝ ombrazeux բառը նոր իմաստ մը կատանայ իբր խրատող, կասկածոտ եւ անկէ կը ծագի caractere ombrazeux. Կան բառեր որ կերպով իւր կրկնագէտ են եւ կը նշանակեն բան մը եւ անոր հակառակն այսպէս hôte բառը հիւր եւ հիւրընկալ կը նշանակէ: Une personne intéressée dans une affaire, un organe du corps intéressé par une blessure, երկու բացատրութեանց մէջ intéressé բառը բողբոլին հակառակ նշանակութիւն ունի. առաջնոյն մէջ շահէկան՝ երկրորդին մէջ շահաւէտ կը նշանակէ:

Երբեմն երկու գրեթէ համանիշ բառեր բողբոլին տարբեր նշականութիւններ կ'ստանան: Այսպէս talent եւ génie որ մինչեւ Ժ.Բ. դար նոյնանիշ էին՝ կը ցուցնեն հիմա Ա.ը աշխատութեամբ ստացուած տաղանդն եւ Բ.ը բնատուր ստեղծող հանճարը: Վերջապէս երբեմն պարզ բառ մը կը ջնջուի այլ անկէ ածանցեալը կը մնան. այսպէս ouvrier այսօր անգործածելի է եւ սակայն ouvrier, ouvrage, ouvrable, manoeuvrer, man» oeuvre, manoeuvrier եւ այլն կենդանի են: Նմանապէս duire, soudre անհետ եղած են՝ բայց ոչ անոնցմէ բարդուած conduire, réduire, séduire, déduire, produire, introduire, résoudre, absoudre, dissoudre եւ այլն:

Այսպէս ամեն բառ իւր յատուկ կենօքը կապրի գրեթէ անկախ իւր արմատէն եւ իւր բարդերէն: Մարդիկ խօսած ժամանակնին ստուգարանութիւնը չեն վնասեր՝ այլ իրենց միտքը բացատրող յարմարադոյն բառը:



Գ Լ Ո Ւ Խ Գ.


ԿԵՆՍԱԿԱՆ ԶՈՒԳՐՆԹԱՑՈՒԹԻՒՆ

(CONCURRENCE VITALE)

Շատ բառեր նոյն կամ մերձաւոր իմաստներ բացատրելու կրնան ծառայած ըլլալ. բայց կամ այն է որ անոնցմէ մին՝ միւս ամենքը կը ջնջէ կամ այն է որ միեւնոյն նշանակութիւնը կը պահեն բայց տարբեր ստորիճանաւորութեամբ եւ գործածութեամբ: Այսօր falloir կը նշանակէ պէտք է ըլլալ: Հին Ֆրանսէիէնը նոյն իմաստը կը յայտնէր estouvoir եւ convenir բառերով: Այս վերջինը ոչ միայն պարզաճէլ այլ եւ հարկ ըլլալ կը նշանակէ: Falloir պահասել կը նշանակէր՝ ինչպէս դեռ այս իմաստովը կը գործածուի սա բացատրութեան մէջ au bout de l'aune faut la toile: L'argent lui faut դրամ կը պակսի՝ դրամ պէտք է՝ յորմէ զիւրաւ հասած է իրեն դրամ պէտք է նշանակութեան: Falloir բային այս վերջին փոփոխութիւնը միջին դարու վերջը տեղի կունենայ երբ estouvoir բայը անհետ կըլլայ եւ convenir միայն պարզաճէլ իմաստը կը պահէ: Այսպէս ահա երկու բառին մին անհետ կըլլայ, միւսը կը վերածի եւ երրորդ մը կը փոխանակէ զանոնք: Օրինակ միջեւս առնունք ouïr, entendre եւ comprendre բայերը: Ժէդ դարուն վերջերը ouïr բայը լինողինսէն անդործածելի կըլլայ եւ անոր կը յաջորդէ entendre բայը որոյ ըստ ինքեան նշանակութիւնն է յիշել իւրաքանչիւր լինել: Բայց entendre բային բնիկ նշանակութիւնն հասկցնելու համար լեզուն կերթայ comprendre՝ պարունակել՝ ըմբռնել կառնու, վրան աւելցնելով իւրաքանչիւր լինել իմաստը:

(Շարայարեյի)

Թ. ԹԷՐԶԵԱՆ.



ՊԱՏԿԵՐ տասն եւ մինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է  
Կ. Պօլսոյ համար . . . . . 40 դամեկան  
Փարստաց եւ օտար երկիրներու համար  
բոլորտարի ծախսն ի միասին հաշուելով 50 « «

## Խորաքանջիչը թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐի խմբագրատունն է ի Բերա . Եւշիլ փողոց  
Թիւ 1 , ուր պէտք է դիմել բաժանորդագրութեան եւ թերթին  
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک و خصمیتله طبع اولمشدر